ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

## ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## 2017-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**Մշակվել է՝** համայնքի ղեկավարին կից գործող «Դդմաշեն համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» կողմից

**Ներկայացվել է՝** համայնքի ղեկավար Ավետիս Ավետիսյանի կողմից

**Հաստատվել է՝** համայնքի ավագանու **10.02.2017թ** .թիվ **7- Ն** որոշմամբ

**Դդմաշեն 2017թ.**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.............................................................................

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ..........................................................................

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ....................

4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.......................................................................................................

5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ...............................................................................................................

6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.............................................................................................................................

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի 2017-2018թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից:

Ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները, նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), Ծրագրի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող Ծրագիրը առաջիկա երկու տարիների համար հանդիսանալու է Դդմաշեն համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Ծրագրի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուց-վածքների առկայությամբ: Ծրագրում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: Ծրագիրը մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, գյուղատնտեսության, տուրիզմի, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վեր հանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և Դդմաշեն գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 25-ի N 8-Ն որոշմամբ ստեղծված համայնքի ղեկավարին կից գործող «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների» (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2018թթ. զարգացման ծրագիրը, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2018թթ. Ծրագրում ներառված են Դդմաշեն համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: Ծրագիրը ներառում է նաև Դդմաշեն համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Դդմաշեն համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման Դդմաշենի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ԽՄ-ը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում Ծրագրում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

# 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Դդմաշեն համայնքը գտնվում է մարզկենտրոնից 51 կմ հեռավորության վրա, մայրաքաղաքից՝ 50 կմ, իսկ տարածաշրջանային կենտրոնից /Սևանից/՝12 կմ հեռավորության վրա: Գյուղը վերաբնակեցվել է 1928թ.՝ Մակու քաղաքից գաղթականներով:

Դդմաշենի համայնքի հողային տարածքը զբաղեցնում է Փամբակի լեռնաշղթայի հարավային թեքության լանջերի և Հրազդան գետի առանձին հատվածները:

Համայնքի վարչական տարածքը զբաղեցնում է 4345 հա տարածք, որն ընկած է ծ.մ. 1800-2400մ բարձրության վրա: Տարածքի ռելիեֆը բավականին խայտաբղետ է: Բնակլիմայական պայմանները բնութագրվում են լեռնատափաստանային գոտու բարեխառն կլիմայով՝ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին:

Բնակավայրի տարածքը կազմում է 204.4 հա, որից բնակելի կառուցապատման՝ 156.3 հա: Համայնքի վարչական տարածքը հատում է M-4 միջպետական նշանակության ավտոմայրուղին, համայնքի տարածքով է անցնում Գեղարքունիքի մարզը Կոտայքի մարզին կապող H-29 հանրապետական նշանակության ավտոճանապարհը: Դդմաշենի տարածքում կան կարմիր, սպիտակ և սև խարամային գոտիներ:

Խմելու ջրով գյուղն ապահովված է 100%-ով, իսկ ոռոգման ջրով՝ 30%-ով:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 4345.22 հա, որից բնակավայրի տարածքը կազմում է 204.39 հա, իսկ համայնքային սեփականության հողերը՝ 2822.5 հա: Հողերի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը՝ 572, սեփականաշնորհված հողի մեկ հողաբաժնի չափը՝ 1.24 հա, որից 0.64 հա վարելահող, այդ թվում տնամերձ և 0.60 հա խոտհարք: Մեկ տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերի քանակը՝ 4:

Համայնքի հողային ֆոնդի բախշումը հետևյալն է.

| | **Համայնքի վարչական տարածքը, որից՝** | **4345.22 հա** |
|---|---|---|
| 1. | Գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում՝ | 3883.07 հա |
| | Վարելահողեր | 747.61 հա |
| | Խոտհարք | 691.22 հա |
| | Արոտավայրեր | 1956.77 հա |
| | Այլ հողատեսքեր | 487.47հա |
| 2. | Բնակավայրի հողեր, որից՝ | 204.39 հա |
| | Բնակելի կառուցապատման | 156.30 հա |
| 3. | Արդյունաբերական և ընդերքօգտագործման հողեր | 203.41 հա |
| 4. | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ հողեր | 22.04 հա |
| 5. | Հատուկ պահպանվող տարածքներ | 12.39 հա |
| 6. | Անտառային հողեր | 3.98 հա |
| 7. | Ջրային հողեր | 15.94 հա |

2016թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքն ունի 736 տնտեսություն և 2829 բնակիչ, որից տղամարդ՝ 1523, կին՝ 1306:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ (0-6տ) - 231
2. դպրոցականներ (7-17տ) - 346
3. 16-62 տարեկաններ – 1956
4. 63-ից բարձր - 296
5. թոշակառուներ - 380
6. հաշմանդամներ - 110
7. աշխատունակներ - 1780
8. գործազուրկներ – բնակչության 15-20 %
9. միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 4

10. արցախյան պատերազմի մասնակիցներ - 15
11. զբաղվածներ - 1723
12. տնային տնտեսությունների (ծխերի) թիվը - 736
13. ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ – 62
14. արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներ – 2
15. բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներ - 250

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Դդմաշենի գյուղական համայնքի 2017 թվականի հունվարի 16-ի թիվ 1-Ն որոշմամբ 2017 թվականի բյուջեն (ճշտված բյուջե եկամտային մասով կազմել է 61430.0 հազար դրամ, ծախսերի գծով՝ **61430.0** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ 0 հազար դրամ: 2017 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 27 **%՝ 16686.0** հազար դրամ:

Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են բուսաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղում չկան կաթնամթերքի և մրգերի վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններ:

Համայնքում չկան արդյունաբերական հիմնարկ-ձեռնարկություններ:

Համայնքի տարածքում գործում է առևտրի 10 կետ, որոնք հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Բոլորն էլ եռամսյա կտրվածքով համայնքի բյուջե են վճարում համապատասխան տեղական տուրք գործունեության թույլտվության համար: Առևտրի այդ կետերը հիմնականում քարե շինություններ են, բացառությամբ երկուսի, որոնք գտնվում է վագոն-տնակներում:

2016 թվականի ընթացքում համայնքում գյուղատնտեսական ապրանքներից արտադրվել է հիմնականում 6280 ց հացահատիկ, 7360 ց կարտոֆիլ, 4658 ց բանջարեղեն, 829 ց պտուղ և հատապտուղ, 30632 ց խոտ և ծղոտ: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում առկա են անասնագլխաքանակի հետևյալ տեսակներն ու քանակությունը - խոշոր եղջերավոր անասուններ՝ 1878 գլուխ, խոզեր՝ 811 գլուխ, ոչխարներ և այծեր՝ 2934 գլուխ, թռչուններ՝ 9439 թև և 619 մեղվաընտանիք: Գյուղատնտեսական արտադրանքի սպառումն հիմնականում իրականացվում են Հրազդանի կամ Երևանի շուկաններում:

Դդմաշենի տարածաշրջանում հայտնաբերվել են նոր քարե դարի բնակատեղիներ: Գյուղում գտնվում է 7-րդ դարում խոյացած սուրբ Թադևոս եկեղեցին: Գյուղի հարավ-արևելյան եզրին, Հրազդան գետի ձախ ափին «Խարաբեք» կոչվող տեղանքում (որը նշանակում է «Ավերակներ») պահպանվում են հնադարյան ամրոցի մնացորդներ: Ամրոցի տարածքում կան դամբարաններ և գյուղատեղի: Գյուղի տարածքում պահպանվել են նաև հնագույն բերդի հետքեր:

Ըստ ավանդության, որտեղ վճիտ ու սառնորակ աղբյուր է եղել, սրբավայր են դարձրել: Դրանցից մեկը կոչվում է «Ծառով ձոր»: Ձորում կան մի քանի ուռենի, մի աղբյուր՝ քաղցրահամ ու վճիտ ջրով: Դդմաշենի պատմական հուշարձանների շարքում յուրահատուկ են մի քանի տասնյակ խաչքարերը՝ ամեն մեկը յուրակերպ, նրբահյուս զարդաքանդակներով: Մեզ համար սովորական խաչքարեր են դրանք, սակայն նրանցից յուրաքանչյուրը կարող է ցանկալի ցուցանմուշ լինել աշխարհի ցանկացած թանգարանում: Խաչքարերի շուրջ ստեղծվել են սրբավայրեր. «Թուխ մանուկ» և «Խաչեր» մատուռները, «Թաք խաչը», «Քրչոտ խաչը», «Ձիարաթը», «Ծակ քարը»: Գյուղի նորագույն սրբավայրը «Խաչով աղբյուրն» է: Դդմաշենի տարածքում է գտնվում «Վոթոյ բուն» քարայրը, որը եղել է հնադարյան բնակատեղի: Համայնքի գլխավոր հատակագծով նախատեսվել է համայնքի տարածքում հանգստի գոտիների ստեղծում: Սակայն ներկայումս համայնքի տարածքում կան վայրեր, որտեղ բնակիչները, ինչպես նաև այլ վայրերից եկող մարդիկ կազմակերպում են իրենց հանգիստը: Այդ վայրերից է գյուղից դեպի հյուսիս գտնվող «Սբ. Հովաննես» սրբավայրի հարակից տարածքը /«Ծառով ձոր»/, որտեղ տարվա տարբեր եղանակներին մարդաշատ է լինում:

Համայնքն ունի 1 միջնակարգ դպրոց, վերջին տարիներին ամբողջովին վերանորոգված, բարվոք վիճակում, ուր սովորում են 250-ից ավել աշակերտներ, ներառյալ՝ նախակրթարանի սաները: Դպրոցն ունի 43 աշխատող, որից 2-ը նախակրթարանում, համալրված է մասնագետ կադրերով: Ապահովված է խմելու ջրով, ունի լոկալ կոյուղի: Դպրոցի շենքը նախատեսված է 800

աշակերտի համար, սակայն վերջին տարիների բնակչության արտագաղթի պատճառով կրճատվել է սովորողների թիվը:

Մանկապարտեզի շենքը կառուցվել է 1980-ական թվականներին և նախատեսված է 100 երեխայի համար: 1996 թվականից մինչև օրս մանկապարտեզը չի գործել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Պետական բյուջեի միջոցների հաշվին 2012 թվականին ամբողջովին վերանորոգվել է տանիքը, փոխվել են դռներն ու պատուհանները, մասնակի վերանորոգվել է շենքը, ամբողջովին վերակառուցվել է ջեռուցման համակարգը, նորացվել են էլեկտրականության, ջրի և կոյուղու ներքին համակարգերը և 2016թ. ընթացքում ՀՏԶՀ հիմնադրմի ծրագրով՝ շենքի մնացած մասի /1 մասնաշենքի/ վերանորոգումը, մանկապարտեզի տարածքի բարեկարգումն ու ցանկապատումը, ջրի և կոյուղու արտաքին համակարգերի կառուցումը, ինչպես նաև նոր գույքի ձեռքբերումն ու կահավորումը: Մանկապարտեզի վերաբացումը նախատեսվել է 2017 թվականի մայիս-հունիս ամիսներից:

Համայնքի ուսումնական հաստատությունների, հաստատություններում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն բերված է աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Դդմաշեն համայնքի հանրակրթական դպրոցների, նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների, նախնական մասնագիտական կրթական հաստատության վերաբերյալ ցուցանիշներ**

| Հ/հ | Հաստատության անվանումը | Աշխատողների թիվը | Սովորողների թիվը |
|---|---|---|---|
| 1. | «Դդմաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | **41** | **210** |
| 2. | «Դդմաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում գործող նախակրթարան | **2** | **42** |
| 3. | «Դդմաշենի մանկապարտեզ» | | |
| 4. | | | |
| 5. | | | |

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա, որն սպասարկում է Դդմաշեն և Ջովաբեր համայնքները և ունի 3800 շահառու: Բուժամբուլատորիայի շենքը 2005 թվականին համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ վերանորոգվել է: Շենքում գործում է ջեռուցման անհատական համակարգ, որը կարևոր է շենքի պահպանման և ձմռան ամիսներին աշխատանքային բարվոք պայմաններ ունենալու տեսանկյունից: Ապահովված է նաև խմելու ջրով: Բուժամբուլատորիայում գործում է կլինիկական ախտորոշիչ լաբորատորիա, իմունկանխարգելիչ և ընտանեկան բժշկի կաբինետներ: Ամբուլատորիան ունի 12 աշխատող, որոնցից մեկ բժիշկ՝ թերապեվտ, ընտանեկան բժիշկ: Ներկայումս բուժամբուլատորիան ունի ընտանեկան բժշկի, ստոմատոլոգիական կաբինետի և ուլտրաձայնային հետազոտության սարքավորման կարիք:

## 2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրերը և միջոցառումները.

1. մշակույթի տան, ներառյալ ենթակառուցվածքների, կապիտալ նորոգում և նոր գույքի ձեռքբերում
2. ոռոգման ջրի պատվարի, արտաքին ջրատարի և ցանցի կառուցում
3. արարողությունների սրահի հիմնանորոգում
4. գյուղամիջյան կամուրջի վերանորոգում
5. առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակի բարելավում պետական պատվերի շրջանակներում,
6. համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատի, սերմացուի, անհրաժեշտ գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտե-

սական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով,

Համայնքի վարչական տարածքում համայնքի կողմից գալիք տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրերը և միջոցառումները.

7. համայնքային փողոցների ու ճանապարհների բարեկարգում և մասնակի ասֆալտապատում
8. փողոցների արտաքին լուսավորության ընդարձակում
9. զոհվածների հուշարձանի ցանկապատում
10. գերեզմանատան ցանկապատում և գոյություն ունեցող ցանկապատի վերականգնում
11. գետի հունի մաքրում և մոտ 2 կմ սելավատարի կառուցում
12. աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում,

տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից նախատեսվող (շարունակվող) իրականացվող ծրագրերը.

13. կանաչ գոտիների ստեղծում
14. սպորտային և բակային տարածքների հիմնում
15. այգեգործության հիմնում,
16. մեղվապահության ընդլայնում և մեղրի արտադրության հիմնում

հարևան համայնքների հետ համատեղ գալիք տարիների համար նախատեսվող միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրերը և միջոցառումները.

- ընդհանուր աղբավայրի կառուցում և շահագործում,
- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման ընդլայնում,

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Պետական մարմինների, ինչպես նաև այլ պատկան մարմինների կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ:

Ծրագրի ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Գեղարքունիքի մարզում գործունեություն ծավալող միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

## 2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հողի հարկի, տրանսպորտային միջոցների և շենք-շինությունների գույքահարկի, հողերի վարձակալության վճարների և տեղական տուրքերի եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2017թ.՝72.8 %, 2018թ.՝ 72.1 %) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 3):

Համայնքի 2017թ. բյուջեի ֆոնդային մասում նախատեսվում է 19130.0 հազար դրամ մուտքեր, որը պլանավորվել է ուղղել կապիտալ ծախսերի իրականացմանը:

Աղյուսակ 3. Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները, 2017թ. նախատեսվածը 2018թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը /հազար դրամներով/

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2015թ. փաստ. | 2016թ. փաստ. | 2017թ. նախատ. | 2018թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 5 | 6 | 10 |
| | **ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*** | | | | |
| **I.** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*** | **57821.1** | **61661.7** | **61430.0** | **62000.0** |
| **1.** | **ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ** | **16162.9** | **16097.5** | **15078.7** | **15656.7** |
| **1.1** | **Գույքային հարկեր անշարժ գույքից** | **11597.8** | **11528.8** | **9971.7** | **9985.0** |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 158.7 | 85.9 | 207.0 | 220.0 |
| | Հողի հարկ | 11439.1 | 11442.9 | 9764.7 | 9765.0 |
| **1.2** | **Գույքային հարկեր այլ գույքից** | **4413.1** | **4563.7** | **5015.0** | **5571.7** |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 4413.1 | 4563.7 | 5015.0 | 5571.7 |
| **1.3** | **Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ** | **152.0** | **5.0** | **92.0** | **100.0** |
| | Տեղական տուրքեր | 152.0 | 5.0 | 92.0 | 100.0 |
| **1.4** | **Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ** | | | | |
| | Պետական տուրքեր | | | | |
| **1.5** | **Այլ հարկային եկամուտներ** | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | | | |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | |
| **2.** | **ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | **40988.7** | **44904.2** | **44743.3** | **44743.3** |
| **2.1** | **Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | |
| **2.2** | **Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | |
| **2.3** | **Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | | | |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | 40988.7 | 44904.2 | 44743.3 | 44743.3 |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 160.9 | | |
| դ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | |
| **2.4** | **Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | |
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | |
| **3.** | **ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*** | **669.5** | **660.0** | **1608.0** | **1600.0** |
| **3.1** | **Տոկոսներ** | | | | |
| **3.2** | **Շահաբաժիններ** | | | | |
| **3.3** | **Գույքի վարձակալությունից եկամուտներ** | | | | |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի | 500.0 | 660.0 | 1600.0 | 1600.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | վարձակալության վարձավճարներ | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | | | |
| 3.4 | **Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,** այդ թվում | | | | |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | | | |
| 3.5 | **Վարչական գանձումներ** | **157.5** | **-** | **8.0** | |
| | Տեղական վճարներ | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | | | |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | | | | |
| 3.6 | **Մուտքեր տույժերից, տուգանքներից** | **12.0** | | | |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | | | |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | | | |
| 3.7 | **Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | |
| 3.8 | **Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | |
| 3.9 | **Այլ եկամուտներ*** | **505.1** | **3200.0** | **6356.9** | |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | 3200.0 | 6356.9 | |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 505.1 | | | |
| II. | **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)** | | | **19130.0** | |
| 1. | **Հիմնական միջոցների իրացումից մուտքեր** | | | | |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | | | | |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | |
| 2. | **Պաշարների իրացումից մուտքեր** | | | | |
| 3. | **Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր** | | | | |
| 4. | **Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր** | | | | |
| | Հողի իրացումից մուտքեր | | | 19130.0 | |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | |
| III. | **ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ) | | | | |
| Ա. | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2) | | | | |
| **1.** | **ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ** | | | | |
| **1.1** | **Արժեթղթեր** | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | |
| **1.2** | **Վարկեր** | | | | |
| | -վարկերի ստացում | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | |
| **1.3** | **Փոխատվություններ** | | | | |
| | -բյուջետային փոխատվությունների ստացում | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | |
| **2.** | **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | |
| **2.1** | **Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն** | | | | |
| | -համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | | | | |
| | -իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր | | | | |
| | -բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում | | | | |
| **2.2** | **Փոխատվություններ** | | | | |
| | -նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | | | | |
| | -փոխատվությունների տրամադրում | | | | |
| **2.3** | **Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը** | | | | |
| **2.4** | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս** | | | | |
| **2.5** | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս** | | | | |
| **2.6** | **Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում** | | | | |
| | **որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը** | | | | |
| Բ. | ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | | | |
| **1.** | **ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ** | | | | |
| **1.1** | **Արժեթղթեր** | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | |
| **1.2** | **Վարկեր** | | | | |
| | -վարկերի ստացում | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | |
| **1.3** | **Փոխատվություններ** | | | | |
| | -փոխատվությունների ստացում | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | |

Աղյուսակ 4. Համայնքի 2017-2018թթ. բյուջեն
( եկամտների և ծախսերի կանխատեսումը)

| եկամտի և ծախսի տեսակը | 2016թ. տարեկան պլան | 2017թ. կանխ. | 2016թ փաստ. նկատ % | 2018թ. կանխ. | 2016թ փաստ. նկատ % |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը եկամուտներ** | **61500.0** | **61430.0** | **99.9** | **62000.0** | **100.8** |
| Հարկային եկամուտներ, որից | 15156.7 | 15078.7 | 99.5 | 15656.7 | 103.3 |
| Հողի հարկ | 10138.8 | 9764.7 | 96.3 | 9765.0 | 96.3 |
| Գույքահարկ | 4917.9 | 5222.0 | 106.2 | 5791.7 | 117.7 |
| Տեղական տուրքեր | 100.0 | 92.0 | 92.0 | 100.0 | 100.0 |
| Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհներ | 44743.3 | 44743.3 | 100.0 | 44743.3 | 100.0 |
| Այլ եկամուտներ | 1600.0 | 1608.0 | 100.5 | 1600.0 | 100.0 |
| Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | - | 19130.0 | - | - | - |
| Տարեսկզբի ազատ մնացորդ | 3200.0 | 6356.9 | - | 7000.0 | - |
| **Ընդամենը** | **64700.0** | **86916.9** | **134.3** | **62000.0** | **106.6** |
| **Ընդամենը ծախսեր** | **84200.0** | **86916.9** | **103.2** | **69000.0** | **81.9** |
| Ընթացիկ ծախսեր, այդ թվում | | | | | |
| Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ. հիմն. աշխատ. աշխատավարձ | 25005.0 | 25000.0 | 100.0 | 25000.0 | 100.0 |
| Ապրանքն. գնման և ծառ. վճ. ծախս | 20645.0 | 20150 | 97.6 | 18200.0 | 88.1 |
| Սուբսիդիաներ | | 6840 | | 13000 | |
| Դրամաշնորհներ | 5100.0 | 1500.0 | 29.0 | - | - |
| Սոցիալական նպաստներ | 10000.0 | 7100.0 | 71.0 | 5000.0 | 50.0 |
| Այլ ծախսեր | 750.0 | 840.0 | 112.0 | 800.0 | 106.6 |
| Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում | 22700.0 | 25486.9 | 112.2 | 7000.0 | 30.8 |
| Հիմնական միջոցներ | | | | | |

## 2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գյուղը հորդառատ անձրևներից և սելավներից չպաշտպանելու հանգամանքը
2. Կոյուղու համակարգի բացակայությունը
3. Բնակչության մի մասի՝ գյուղից բացակայելու պատճառով հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:
4. Մեծ թեքությունների պատճառով խոտհարքների և արոտավայրերի էրոզիա
5. Գյուղը Երևան-Սևան միջպետական մայրուղուն կապող ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհի և անմխիթար վիճակ և գյուղի երկու թաղամասերն իրար կապող, <<Հրազդան>> գետի վրա կառուցված կամուրջի վթարային և անմխիթար վիճակ:
6. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,
7. Ազգաբնակչության սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում, որը իր մեջ ներառում է գյուղ մթերքների, մասնավորապես կաթի մթերման և վերամշակման կազմակերպում, բարձր կաթնատվությամբ տոհմային անասունների ձեռքբերումը և բուծումը, նոր գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերումը, ցանքատարածություններ ավելացումը և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումը,

8. Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով,

## 2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ , ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈւԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**Համայնքի ուժեղ կողմերը**

1. Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցի առկայություն և գերազանց վիճակ
2. 100 %-ով գազաֆիկացում
3. Ֆիքսված և բջջային հեռախոսակապի և ինտերնետ կապի առկայություն
4. Հարակից գյուղերի, մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ կապող մայրուղու և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նորմալ /վերանորոգված, ասֆալտապատված/ վիճակ
5. Գյուղապետարանի, մշակույթի տան, դպրոցի, բուժամբուլատորիայի, մանկապարտեզի, ինչես նաև «Հայփոստի» տիպային շենքերի առկայություն
6. Բուժամբուլատորիայի շենքի վերանորոգված վիճակ, աշխատանքային նորմալ պայմաններ, բուժ. անձնակազմի մասնագետ կադրերով ապահովվածություն
7. «Դդմաշեն համայնքի արտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի գործունեություն, որի շրջանակում ձեռք է բերվել համայնքին անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ, ինչպես նաև ջրարբիացվում են հեռագնաց արոտավայրերը, հեռագնաց արոտներում տեղադրվել է 3 հատ խմոցներ՝ 3800 մ ջրագծով և կապտաժներով՝ անասունները ջրելու համար, 2 հատ փարախ՝ 2044 քմ ընդհանուր մակերեսով և 2 անասնապահի տնակ՝ յուրաքանչյուրը 24 քմ մակերեսով
8. Մեծ չափի արոտավայրեր, խոտհարքներ և վարելահողեր, որը հնարավորություն է տալիս զարգացնելու հողագործությունը, անասնապահությունը և այգեգործությունը
9. Համայնքն ունի մեծ թվով բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող բնակիչներ, ինչպես նաև ուսանողներ
10. Աշխատուժի առկայություն
11. Գյուղում կա 7-րդ դարի եկեղեցի, բազմաթիվ սրբավայրեր, խաչքարեր, հեթանոսական ժամանակաշրջանի արձաններ և դամբարանադաշտեր, ինչպես նաև պատմամշակութային արժեքներ ներկայացնող այլ վայրեր, որոնց շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջությունը գյուղում:
12. համայնքի ղեկավար-ավագանի-բնակիչներ՝ ամուր կապը և փոխհամաձայնեցումը.
13. համայնքի ղեկավարի փորձը և ազգաբնակչության վստահությունը:

**Համայնքի թույլ կողմերը**

1. Ներհամայնքային ճանապարհների ոչ բավարար վիճակ,
2. Աշխատատեղերի պակաս և գործազրկության բարձր մակարդակը,
3. Արտագնա աշխատանքի մեկնողների թվի մեծացում,
4. Կոյուղու համակարգի բացակայություն,
5. Արոտների և խոտհարքների հեռագնացությունը,
6. Գյուղմթերքների ընդունման և վերամշակման ձեռնարկության բացակայություն,
7. Երիտասարդության աշխատանքային և ժամանցային վայրերի բացակայություն,
8. Բարձր բերքատվություն ապահովող սերմերի /հացահատիկ, կարտոֆիլ և այլն/ և նոր ցեղատեսակի անասունների ձեռքբերման բացակայություն,
9. ազգաբնակչության անվճարունակությունը, սոցիալ-տնտեսական պայմանների ցածր մակարդակը.

**Համայնքի հնարավորությունները**

1. Մեծ աշխատուժի առկայություն,
2. Մշակության համար պիտանի հողերի առկայություն, պտղատու այգիների հիմնում և այգեգործության զարգացում,
3. Արտադրական տարածքների առկայությունը:

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

1. Կոյուղու համակարգի բացակայությունը
2. Բնակչության մի մասի՝ գյուղից բացակայելու պատճառով հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:
3. Բնական աղետները / երաշտ, կարկուտ, անձրևային սելավներ/
4. Ընտանի կենդանիների շրջանում համաճարակների բռնկումը
5. Գործազրկության մակարդակիաճը,

# 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

## 3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Համայնքի տեսլականն է՝

Համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

Համայնքապետարանի ռազմավարական քաղաքականությունն է՝ հետևողականորեն բարեփոխումներ անցկացնել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման նպատակով:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում,
- համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,
- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, արտաքին լուսավորության համակարգի ընդարձակում,
- համայնքի բնակչության սոցիալ–տնտեսական պայմանների բարելավում, նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում,

- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության աստիճանի հետևողական բարձրացում:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները ներկայացված է աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)**

| Հ/Հ | Ցուցանիշները | 2017 | 2018 |
|---|---|---|---|
| 1. | Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով) | **19.6%** | **17%** |
| 2. | Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով | **-0.5%** | **3.3%** |
| 3. | Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով | **1%** | **1.5%** |

## 3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**Համայնքի զարգացման կայուն նպատակներն են՝**

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման, մասնակցության կարգի մշակման և ընդունման, մասնակցության մեթոդների և ձևերի աստիճանական զարգացման միջոցով,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, մեղվաբուծության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորության ընդարձակում,
- համայնքի մանկապարտեզի գործարկում,
- համայնքում մշակութային և սպորտային կյանքի աշխուժացում
- պաշտպանել համայնքի բնակչության իրավունքները և օրինական շահերը.
- բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները.
- համայնքի տարածքում ստեղծել նոր աշխատատեղեր՝ զարգացնելով փոքր և միջին բիզնեսը, գյուղատնտեսությունը.
- միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- բարձրացնել գյուղապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկների կառավարման արդյունավետությունը:

**Համայնքի զարգացման հիմնական նպատակներն են՝**

1. մշակույթի տան, ներառյալ ենթակառուցվածքների, կապիտալ նորոգում և նոր գույքի ձեռքբերում
2. ոռոգման ջրի պատվարի, արտաքին ջրատարի և ցանցի կառուցում

3. արարողությունների սրահի հիմնանորոգում
4. գյուղամիջյան կամուրջի վերանորոգում
5. փողոցների արտաքին լուսավորության ընդարձակում
6. զոհվածների հուշարձանի ցանկապատում
